ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

HAIA-5

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-5

YEREVAN
IAE PUBLICATION 2023

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2023

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ – 5

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Հարություն Մարության, Համլետ Պետրոսյան, Գագիկ Սարգսյան, Ադամ Սմիթ, Նվարդ Վարդանյան* (պատասխանատու խմբագիր), *Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քաուի*

Editorial Board

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Harutyun Marutyan, Hamlet Petrosyan, Gagik Sargsyan, Adam Smith, Giusto Traina, Nvard Vardanyan* (Managing editor)

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 5-րդ հատորն ընդգրկում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, Հայաստանի պատմության թանգարանի, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի և այլ հիմնարկների հետազոտողների գիտական հոդվածներ, որոնք վերաբերում են հնագիտության, ազգագրության, մշակութային մարդաբանության և բանագիտության՝ մինչ օրս չլուսաբանված զանազան հիմնախնդիրների քննությանը: Որոշ հոդվածներ ունեն միջգիտակարգային բնույթ և շոշափում են նաև լեզվաբանական, արվեստաբանական հարցադրումներ: Համարն ընդգրկում է նաև գիտական հաղորդումներ և հոբելյանական հոդված:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ԵՒ ԳՏԱԾՈՆԵՐ 7

Բենիկ Վարդանյան
Կուր-արաքսյան միջագետքի բրոնզ-երկաթեդարյան կեռերը 8

Հենրիկ Դանիելյան
«Կիկլոպյան» ամրոցների ֆենոմենը՝
Արագածի հարավային լանջերի ամրոցների օրինակով 26

Լևոն Մկրտչյան
Արարատյան դաշտի հյուսիսում գտնվող աշտարակատիպ կառույցները 37

Արմինե Գաբրիելյան
Արցախի Տիգրանակերտի անտիկ դրոշմազարդ խեցեղենը 45

Ռուզան Փալանջյան
Անտիկ ժամանակաշրջանի գինեգործությանն առնչվող
հնագիտական գտածոներ Վայոց ձորից 57

Դիանա Միրիջանյան
Հայաստանի միջնադարյան քարե տապանները 66

Արսեն Հարությունյան
Տաթևի մեծ անապատի վիմագրական ժառանգությունը 76

II. ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 95

Նվարդ Վարդանյան
Ավելը (ցախավելը) ծիսահավատալիքային համատեքստում.
ավանդույթի հարատևումը մեր օրերում 96

Սմբատ Հակոբյան
Մահը հայկական ֆեյսբուքում.
ավանդական, մոդեռն, թե պոստմոդեռն սուգ 109

III. ՊԱՐ ԵՒ ԾԵՍ 123

Նարինե Շամամյան
Պարերը Վայոց ձորի հարսանեկան արարողություններում
(ավանդույթ և արդիականություն) 124

Հայարփի Մնանյան
Իրանահայերի չուբբազի (փայտախաղ) և դաստմալբազի
(թաշկինակներով պար) պարերը ծիսական և կենցաղային միջավայրում 137

IV. ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒՅԹ 149

Սամվել Ռամազյան
Քաչալ Համզա. ընդհանուր կերպար հայկական և թյուրքական էպոսներում 150

Հասմիկ Մարիկյան
Օրորոցի լեզվամշակութային դրսևորումները հայ իրականության մեջ (անգլալեզու նյութի համադրմամբ) 172

Լուսինե Անգելուշ
Երևան քաղաքի ուսանողության լեզվական վարքագիծը և միջմշակութային հաղորդակցումը 182

V. ՊՈԼՍԱՀԱՅՈՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 195

Սալվինե Մարկոսյան
Ներհակությունները պոլսահայ համայնքում. արևմտահայերի ազգային սահմանադրության հաստատման շուրջ (1856–1863 թթ.) 196

VI. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ 207

Մարիամ Մարիբեկյան
Հառիճի հնագիտական հուշարձանի ուսումնասիրության պատմությունից 208

Յարութիւն Խաչատուրեան
Խաչքարերի ուսումնասիրության մեթոդաբանական ակնարկ 214

VII. ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ 225

Արման Մալոյան
Հակոբ Չոլաքյան - 75 226

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ԵՒ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ 233

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 276

II

ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

DOI:10.54503/2953-805X-2023.5-96

Վարդանյան Նվարդ, *բ. գ. թ.*
ՀԱԻ/ԵՊՀ

ԱՎԵԼԻ (ՑԱԽԱՎԵԼԻ) ԾԻՍԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԱՎԱՆԴԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՊՐՈՒԿՆԵՐԸ ՄԵՐ ՕՐԵՐՈՒՄ*

Ժողովրդական ծիսահավատալիքային աշխարհում և բանահյուսության մեջ հարուստ իմաստաբանությամբ է օժտված առաջին հայացքից հասարակ թվացող կենցաղային մի իր, ինչպիսին է ավելը կամ ցախավելը: Ավելի հետ կապված մի շարք ժողովրդական ընկալումներ, որոնք կենսունակ են նաև մեր օրերում, բավական հին արմատներից են սերում՝ բացահայտելով ժողովրդական պատկերացումների հարուստ համալիր: Ավելի ծիսական կիրառությունների և ավելի հետ կապված սովորույթների ու հավատալիքների մասին հարուստ նյութեր կան ինչպես նախորդ երկու դարերի, այնպես էլ մերօրյա ազգագրական գրառումներում: Ըստ այդմ, ավելը, որպես ծիսական առարկա, կիրառություն է ունեցել անձրևաբեր և անձրևախափան, հարսանեկան, ամանորյա և այլ ծեսերում ու ծիսական բնագրերում: Չնայած դրան, հայ բանագետների և ազգագրագետների աշխատություններում մինչ օրս թեման քննության չի ենթարկվել:

Սույն հոդվածի շրջանակում ազգագրական և բանահյուսական նյութերի ավանդական և մերօրյա գրառումների[1] դիտարկման ճանապարհով կփորձենք ներկայացնել ավելի իմաստաբանությունը. ավելը/ցախավելը՝ որպես կանացի սիմվոլ, որպես քաոսի ուժերի դեմ պայքարող հմայական գործիք և որպես բուժարար՝ հիմնվելով առարկայի ծիսական կիրառության, սովորութային ընկալումների և դրանց բանահյուսական արձագանքների վրա:

Հիմնաբառեր՝ ավել, ցախավել, մշակութային խորհրդանիշ, ժողովրդական ծես, հավատալիք, բանահյուսություն:

Ներածություն

Ժողովրդական ավանդույթում կենցաղային իրերն իրենց առօրյա իմաստաբանությունից զատ սովորաբար ձեռք են բերում հավելյալ՝ այլաբանական իմաստ: Այսպիսի իմաստավորումը սովորաբար պայմանավորված է լինում այդ առարկայի որևէ հատկանիշով՝ գործառույթով, գույնով, ձևով, ինչպես նաև՝ ծիսական կիրառությամբ: Այս հավելյալ իմաստավորումներն առարկաներին խորհրդանշական իմաստ են հաղորդում, որով և դրանք մշակութային արժեք են ձեռք բերում: Խորհրդանշական նման իմաստավորումները, որոնք հասկանալի

* Հոդվածի՝ առավել ընդգրկուն ռուսերեն տարբերակը լույս է տեսել Սանկտ-Պետերբուրգում հրատարակվող «Этнография» պարբերականում [Варданян 2022]:

[1] Ժամանակակից բանահյուսական-ազգագրական գրառումները կատարել ենք հիմնականում 2017–2018 թթ.՝ ՀՀ տարբեր շրջաններից սերող բանասացներից, որոնց վերաբերյալ հղումները կտրվեն հոդվածի տողատակերում՝ ծանոթագրությունների ձևով:

են տվյալ մշակույթի կրողներին, կողմնակի մեկին կարող են բոլորովին անհասկանալի մնալ[2]: Դրանք հասկանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել տվյալ ժողովրդի ծեսերը, սովորույթները, հավատալիքները, բանահյուսությունը:

Ստորև կանդրադառնանք ավելի (ցախավելի) ծիսական և կենցաղային կիրառության մի շարք դրսևորումների, որոնց օգնությամբ կփորձենք ամբողջացնել դրա մշակութային, խորհրդանշական իմաստավորումները:

Ավելը ծիսական համատեքստում

Դիտարկենք ավելի ծիսական կիրառության երեք բնագավառ՝ անձրևաբեր և անձրևախափան ծեսերը, ամանորյա ծիսական սովորույթները և հարսանեկան ծեսերն ու ծիսական բնագրերը:

Ա. Ավելի կիրառումն անձրևաբեր ծեսերում: Կնոջ հագուստով զարդարված ցախավելե տիկնիկը գործուն դերակատարում ունի անձրևաբեր ծեսերում: Անձրևաբեր տիկնիկները հիմնականում ավելից կամ ցախավելից էին պատրաստվում[3]: Դրանք տարբեր շրջաններում տարբեր անվանումներ ունեին՝ *Նուրի, պուրպաւրիկին, ուրբաթեկին, խունձկոլոլա, մամա չթթիկ, չիչի մամա, պուպլաւրիկին ևն*[4]: Ցախավելե այս տիկնիկի արցախյան համարժեքն, օրինակ, անգամ իր անվամբ որոշակիորեն ցախավել է նշանակում («Ճոլի, Ճոլոլ-ճոլոլ» Արցախի բարբառում փունջ-փունջ կախված է նշանակում[5]), և ժողովրդական ծեսերում ունի և՛ անձրևաբեր, և՛ անձրևախափան գործառույթ[6]: Այս տիկնիկները երաշտի ժամանակ պատրաստել են և երգելով ման տվել՝ հույս ունենալով այդպիսով ազդել բնության ուժերի վրա և անձրև առաջացնել: Մինչ մեր օրերը ավանդված ծիսական այս գործողության արմատները բավական հին են և կապվում են ջրային տարերքին առնչվող աստվածուհիների հետ: Հնում երաշտի ժամանակ աստվածուհիների արձաններ են ման տվել և ամեն կողմից նրանց վրա ջուր ցանել ու զոհեր մատուցել: Նույն բանը կատարվում էր նաև 19–20-րդ դդ. Նուրինի նկատմամբ[7]: Հարս-ցախավել շրջեցնելը ընդունված է եղել նաև Վարդավառի ծեսի ժամանակ: Քղեցիներն, օրինակ, հարս-ցախավելը բռնած՝ դռնեդուռ էին ման գալիս, ժողովուրդը ջուր էր լցնում նրա վրա և տալիս պատանիների ուզածը[8] [նկ. 1]:

Ցախավելը կիրառվում էր ոչ միայն անձրևաբեր, այլև անձրևախափան ծեսերի ժամանակ: Երվանդ Լալայանը հիշատակում է, որ անձրևը դադարեցնելու նպատակով գողանում էին քահանայի ավելն ու այրում[9]:

---

2 Հմմտ. Тарнапольская 2013, 110.

3 Խաչատրյան 2017, 159:

4 Աբեղյան 1975, 169:

5 Աճառյան 1913, 729:

6 Հայրապետյան 2004, 217–226:

7 Մելիք-Փաշայան 1963, 31:

8 Խառատյան 2005, 213:

9 Լալայան 1988, 432:

Ո՞րն է պատճառը, որ հատկապես ավելն ու ցախավելն են դառնում անձրևաբեր և անձրևախափան ծիսական տիկնիկների պատրաստման հումքը: Անշուշտ, առաջին՝ ամենապարզ պատճառաբանությունը կարող է լինել այն, որ ավելը կանացիակերպ է՝ գոտուց ներքև՝ շրջազգեստ հիշեցնող, հետևաբար կարող էր իգական ջրային աստվածուհիների մարմնավորել: Սակայն, կարծում ենք, կա ավելի խորքային պատճառ: Պակաս կարևոր չէ ավելի չորությունը, որը կարող էր խորհրդանշել չորացած, անպտղացած բնությունը: Այս առումով չոր խոտաբույս ավելը նույնանում է նաև պտղաբերելու անընդունակ կանանց՝ այրիներ, կույսեր, պառավներ, որոնք մասնակցում էին անձրևաբեր ծեսերին[10]:

Ավելի և անձրևի այսպիսի առնչություն և ավելի միջոցով անձրև առաջացնելու սովորույթներ առկա են նաև այլ ժողովուրդների մեջ: Բուլղարիայում, օրինակ, անձրևաբեր և անձրևախափան ծիսական տիկնիկ Գերմանին դարձյալ ավելից են պատրաստել [11]: Ավելի՝ անձրևի հետ ունեցած կապը ակնառու է չինական եղանակի աստվածուհի Սյաո Չին Նյանի կերպարում[12], որը ներկայանում է որպես Ցախավելով տիկին: Նա իր ցախավելով կարողանում է ցրել և հավաքել ամպերը: Իսկ երբ շատ էր անձրևում, մարդիկ թղթից ավելներ էին պատրաստում և փակցնում դռներին ու դարպասներին[13]:

Գուցե մեզանո՞ւմ էլ ավելը հնում եղել է անձրևի աստվածուհիների ատրիբուտ՝ դժվար է ասել. համենայն դեպս, նման մի կապի հնարավորությունը բացառված չէ՝ հաշվի առնելով ավելի՝ այդքան մեծ կիրառությունը հատկապես անձրևաբեր ծեսերի ժամանակ:

Բ. Ավելը և ցախավելը հարսանեկան սովորույթներում և ծիսական բնագրերում: Հարսանեկան սովորույթներում և ծիսական բնագրերում ավելը կամ ցախավելը հիմնականում խորհրդանշում են հասունացած աղջկան, հարսնացուին:

Հայաստանում, կարելի է ասել, համահայկական սովորույթ է եղել՝ ի նշան ամուսնացնելու աղջիկ ունենալու՝ ցախավելը տան կտուրին, աթարի դեզի վրա կամ դարպասին կապելը: Ընդ որում, որոշ տարածաշրջաններում, օրինակ՝ Ապարանում, աթարի դեզի կամ կտուրի վրա դրված ավելների քանակը համապատասխանում էր տան չամուսնացած աղջիկների թվին[14]: Եթե ավել էին դնում՝ ուրեմն տանը նորատի աղջիկ կար, եթե ցախավել՝ այրի կին[15]: Այն տարածաշրջաններում, ուր կար վերոհիշյալ սովորույթը, հանդիպում է նաև խնամախոսության ժամանակ ասվող հետևյալ այլաբանական բանաձևը. «*Մենք գի-*

[10] Սիմոնյան 2017, 85:

[11] Славянские древности 1995, 311.

[12] Chamberlain 2009, 235.

[13] Каннингем 1997.

[14] Արագածոտնի մարզ, ք. Ապարան, հաղորդեց՝ Բարսեղյան Վարդուհին (ծնվ. 1999 թ.), 2018 թ.:

[15] Նահապետյան 2013:

տենք, որ ձեր տանը ցախավել կա, եկանք, որ տանենք մեր տուն. մեր տանը չկա»[16]:

Ավելը կամ ցախավելը հաճախ հանդիպում է նաև հարսանեկան երգերում՝ այս դեպքում ևս հաճախ անձնավորելով հարսին: Հարցի առնչությամբ խոսուն են հատկապես ծիսերգի հետևյալ տողերը. «*Ժամի դռան* ***ավելը****, / Դռս ջոկեցիր լավերը*[17]»: Փեսայի ընտրությունը գովաբանող այս բանատողերում հարսի գովքը, նրա՝ լավագույնը լինելը պատկերավորվում է «*ժամի դռան ավելի*» խորհրդանիշ-պատկերով: Բոլոր հասունացած աղջիկների՝ հարս-ավելների մեջ, փեսայի ընտրությունը կանգ է առել լավագույնի վրա՝ եկեղեցու դռան ավելի:

Դռան ետևի ավելի՝ որպես հարսի անձնավորման օրինակներ տեսանելի են նաև այլ ծիսերգերում: Այսպես, Կոմիտասի գրառած տարբերակներից մեկում դռան ետևի ցախավելը հարսի վարսերի հետ է նույնացվում[18]* (*Ցախավել հեւրքըն դըրան... / խարսի ծամերն ի*[19]):

Հարսանեկան որոշ երգերում ծաղկած ավելը համադրվում է նաև ծաղկած կենաց ծառին. «***Ծաղկուն ավել****, ծակ ծակ քարեր, / Կես գիշերուն լուսնակն առեր...*»[20] (հմմտ. ռուսական հարսանեկան ծեսում երբեմն կենաց ծառի փոխարեն օգտագործվել է ավելը[21]):

Ավել-հարսնացու աղջիկ կապը ակնհայտ է նաև ժողովրդական հեքիաթներում, ուր հաճախ գերբնական, կենդանակերպ հարսնացուի գաղտնիքը բացահայտվում է հենց ավլելու միջոցով: Նա ամեն օր տղայի և նրա մոր բացակայության ժամանակ մարդ է դառնում, ավլում է տունը, որով էլ մայրն ու որդին կռահում են հարսնացուի գոյության մասին (օրինակ՝ գորտ-հարսնացուի մասին սյուժեն[22]):

Անշուշտ, ավելն առաջին հերթին կնոջ ձեռքի աշխատանքային գործիք է, և պատահական չէ ավել-աղջիկ այս ուղղակի կապը: Այս առումով ուշագրավ է նաև հարսանեկան ծիսական այն սովորույթը, ըստ որի՝ փեսայի տուն մտնելուն պես ավելը տալիս էին նորահարսի ձեռքը, և վերջինս փոքր-ինչ ավլում էր զանազան կողմերի վրա[23]: Սա կարելի է մեկնաբանել և՛ որպես նորահարսի կենցաղային պարտավորության ծիսական ամրագրում, և՛ որպես չարը խափանող, մաքրագործող ծիսական մի գործողություն: Ըստ երևույթին, հնամենի այս սովորույթներն են արտացոլված նաև ժողովրդական ասացվածքում՝ «*Թազա*

---

16 Արարատի մարզ, գյուղ Մարմարաշեն, հաղորդեց՝ Գևորգյան Քնարիկը (արմատներով Խոյից), 2017 թ.:

17 Գրիգորյան 1983, 198:

18 Երգի որոշ տարբերակներում դռան ետևի ցախավելը նույնացվում է գզիրի կնոջ, մշակների հետ:

19 Կոմիտաս 2000, 77:

20 Սրվանձտյանց 1978, 529–531:

21 Морозов 2011, 123–124.

22 ՀԺՀ-8, 22:

23 Քաջբերունի 1901, 189, 191:

էվիլը միշտ էլ լավ ա սրտիրմ», որն ըստ բանասացի վկայության՝ վերաբերում է նոր հարսներին[24]:

Ինչպես տեսնում ենք, ավելը կամ ցախավելը ժողովրդական գիտակցության մեջ հիմնականում իգական անձնավորում ունեն (այսպիսի նույնացումն ակնհայտ է նաև ազգագրական մոտիվներով կանացի հուշանվերային տիկնիկների պարագայում [նկ. 2]) և առաջին հերթին ասոցացվում են հարսնացող աղջկա հետ: Հենց այս մտածողությամբ է պայմանավորված դեռ չամուսնացած աղջիկներին «օտար տան ցախավել»[25] անվանելը՝ որպես վաղ թե ուշ ուրիշի տուն հեռացող, օտարացող հարս, ինչպես նաև՝ խնամիական երգիծական հակամարտությունների ժամանակ հարսնացուին ցախավել անվանելը. «*…մեյ խին ցախավել էլ որ խարս տանենք մեր լաճռ խամար, էլրմ մե խամար փառք է*»[26]:

Գ. Ավելի կիրառությունը ամանորյա սովորույթներում: Ավելի՝ որպես այս և այն աշխարհների միջև կարգուկանոնի գերբնական պահապանի ունեցած կարևոր նշանակությամբ է պայմանավորված դրա գործուն դերակատարումը ամանորյա ծեսերում: Հայաստանի մի շարք շրջաններում ավելն Ամանորի տոնական օրերին կախել են տան դռան վրա [նկ. 3]՝ որոշ շրջաններում որպես զարդարանք վրան ժապավեններ կապելով[27]: Գործուն սովորույթ է եղել նաև Նոր Տարվա կեսգիշերից առաջ ավելը տնից դուրս հանելը, դռան մոտ դնելը, իսկ հետո նորից տուն բերելը (այսպիսի սովորույթի մասին էր վկայում, օրինակ, ծնունդով շամխորեցի մեր բանասացը[28]): Հինը մաքրելու, նորը ներս բերելու իմաստաբանությամբ է պայմանավորված նաև Նոր Տարվանից առաջ մի քանի ավելներով տան օդն ավլելու սովորույթը[29]:

Հիշյալ ընկալումների հետևանքով ավելն ընդհանրապես ձեռք է բերում չարխափան հմայիլի գործառույթ, և դրանով է պայմանավորված, որ մեր օրերում բավական տարածված են հմայիլ-ավելները, որոնք սովորաբար զարդարված են լինում մրգերով, ցորենով և կանացի աշխատանքային գործիքներով [նկ. 4]: Այսպիսի ավելների վաճառքն այսօր կոմերցիոն բնույթ ունի: Դրանք սովորաբար վաճառվում են տոնական օրերին, հատկապես վանքերի մոտ: Մարդիկ այս ավելները կախում են տանը՝ հավատալով, որ այն հաջողություն է բերում:

---

24 Տավուշի մարզ, ք. Բերդ (Շամշադին), հաղորդեց՝ Վարդուհի Պապյանը (ծնվ. 1968 թ.), 2018 թ.:

25 Մնձուրի 1986, 33:

26 Ավագյան 1978, 72:

27 Գեղարքունիքի մարզ, Մարտունու շրջան, գյուղ Լիճք, հաղորդեց՝ Հովհաննիսյան Մերին (ծնվ. 1998 թ.), 2017 թ.; Արարատի մարզ, գյուղ Մարմարաշեն, հաղորդեց՝ Գևորգյան Քնարիկը (ծնվ. 1999 թ.), 2017 թ.:

28 Երևան, հաղորդեց՝ Հովհաննիսյան Փիրուզան (ծնվ. 1958 թ.), ծնունդով Շամխորից, 2018 թ.:

29 Շիրակի մարզ, գյուղ Լանջիկ, հաղորդեց՝ Հովսեփյան Վալյան (ծնվ. 1998 թ.), 2017 թ.:

Ավելի և ավլելու հետ կապված հավատալիքները ժողովրդական կենցաղում. ավելն իբրև կարգուկանոնի սկզբնավորող

Ավելի հետ կապված հավատալիքները բավական արմատացած են ժողովրդական գիտակցության մեջ, և անգամ մեր օրերում, երբ դրանց արդեն մեծ մասամբ չեն հավատում ու հետևում, հիմնականում բոլորը գիտեն դրանց մասին, իսկ մի մասն էլ շարունակում է հավատարիմ լինել ավլելու հետ կապված որոշակի արգելքների, որոնք պատգամի ձևով ժառանգություն է ստացել մայրերից և տատերից: Այդ հավատալիքների թվում այսօր ամենատարածվածը մայրամուտից հետո տունը ավլելու արգելքն է: Հավատալիքի մասին վկայություններ գտնում ենք և՛ վաղ, և՛ ժամանակակից ազգագրական գրառումներում: Ժողովուրդը գիշերով ավլելու արգելքին տարբեր մեկնաբանություններ է տալիս: Ըստ այդմ, գիշերը ավլելիս հնարավոր է դիպչել չար ոգիների. այդ պատճառով, եթե նույնիսկ ստիպված էին լինում ավլել, ապա անպայման խանձում էին ավելի ծայրը՝ չարքին նախապես հալածելու նպատակով[30]: Այս սովորույթը հանդիպում է անգամ մեր օրերում[31]:

Ամենից տարածված պատճառաբանությունն, իհարկե, կապված է տան հաջողությունը (*բարաքյաթ*) չհանելու հետ: Այս նպատակով անգամ երեկոյան ավլելու դեպքում աղբը չէին թափում: Այս համահայկական սովորույթին շատերը հետևում են նաև մեր օրերում:

Երեկոյան ավլելու արգելքին ուշագրավ բացատրություն է տալիս մեր բանասացներից մեկը՝ Հովհաննիսյան Փիրուզան: Ըստ նրա՝ մայրամուտից հետո չարն ու բարին բաժանվում են, տունը չեն ավլում, որպեսզի բարին չհանեն տնից[32]: Այս տրամաբանությամբ ցերեկը՝ լույսի և բարու տիրապետության ժամանակ ավլելով, մենք տնից հանում ենք ***ավելը, ավելորդը***՝ չարը, ավլելով գիշերը՝ մթի և չարի տիրապետության ժամանակ՝ մենք հանում ենք բարին:

Արևի մայր մտնելուց հետո ավլելու արգելքն այնքան խիստ է դրված ժողովրդական գիտակցության մեջ, որ այդ մասին նույնիսկ ավանդազրույցներ կան, ուր պատմվում է, թե ինչպես է երեկոյան ավլող աղջիկը պատժվում: Նա ցերեկը մեռած է մնում, գիշերը՝ կենդանանում[33], այսինքն՝ անցում է կատարում ժամանակային մեկ այլ կենսաշրջանի, երբ արթուն կյանքը ստիպված է անցկացնել մթի տիրապետության ժամանակահատվածում:

Հիշյալ արգելքից բացի, ժողովրդական հավատալիքներում առկա են նաև ավլելու այլ արգելքներ: Արգելվում է ավլել ճանապարհ գնացողի ետևից՝ նախքան վերջինիս՝ տեղ հասնելը, կամ մինչև որ վերջինս չանցնի մի գետի կամ ջրի վրայով[34], առավել ևս, եթե մեկնողը հեռու ճանապարհ է գնում: Ցանկացած

---

30 Աբեղյան 1975, 33; Ռաֆֆի 1962, 142:

31 Արարատի մարզ, գյուղ Լուսառատ, հաղորդեց՝ Ղազարյան Վարդուհին (ծնվ. 1934 թ.), ծնունդով՝ Սասունի Բառընջ գյուղից, 2017 թ.:

32 Երևան, հաղորդեց՝ Հովհաննիսյան Փիրուզան (ծնվ. 1958 թ.), ծնունդով Շամխորից, 2017 թ.:

33 Ղանալանյան 1969, 3, №1բ:

34 Տավուշի մարզ, Բերդ (Շամշադին), հաղորդեց՝ Պապյան Վարդուհին, 2018 թ.:

ճանապարհ երկու տարբեր տարածքների միջև անցումային իրավիճակ է ենթադրում և այդպիսով՝ որոշակի վտանգ ներկայացնում: Ավելը վերացնում է մարդու ոտնահետքերը, որոնք մեկնողի ներկայությունն են ապահովում նախորդ տարածքում՝ մինչև նրա՝ մեկ այլ տարածք հասնելը: Այս առումով ուշագրավ են հարսանեկան երգերից մեկի բանատողերը, ուր հարսը հորդորում է մորը չավլել իր ոտնահետքերը՝ հնարավորինս երկար հայրական տանը իր ներկայության վերջին մասնիկները պահպանելու համար (*Մե՛րիկ, մի ավլի զկրահիրիկ, / Որ չավրի քո աղջկա հետրիկ…*[35]):

Ավլելը խիստ վտանգավոր գործողություն է ընկալվում այն պարագայում, երբ տանը նոր մահ է լինում: Այդպիսի տունը սովորաբար մի քանի օր չէին ավլում, որպեսզի նոր մահ չլիներ[36]: Մահվանը հաջորդող օրերին որոշակի զգուշավորությունների մասին են վկայում ժողովրդական մի շարք սովորություններ: Հանգուցյալ ունեցող տունը խոցելի է, որովհետև այստեղ կարծես թե բաց են անդրաշխարհ տանող դռները: Ենթադրելի է, որ ժողովուրդը տագնապել է, որ չարի և բարու, այս և այն աշխարհների միջև կարգուկանոնը պահպանող այս գործիքը՝ ավելը, կարող էր պատճառ դառնալ նոր մահվան:

Ավելի՝ մահվան հետ ունեցած կապը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ իբրև մեռած խոտաբույս՝ ավելը կարող է մարդուն փոխանցել իր այդ հատկանիշը: Սլավոնների մեջ ավելի հարվածն անգամ կարող էր հանգեցնել նրան, որ երեխան այլևս չաճեր, մահանար[37]: Հայերի մեջ տարածված է այն հավատալիքը, թե ավելով հարվածը կարող է հանգեցնել երիտասարդ աղջիկների և տղաների չամուսնանալուն, այսինքն՝ խանգարել նրանց աճին և պտղավորմանը:

Ի տարբերություն առօրյա կենցաղում եղած արգելքների, ըստ որոնց՝ ավելը կարող է պակասեցնել, տնից հանել տան ունեցվածքը կամ այսրաշխարհային իրերն ու նույնիսկ մարդկանց ուղարկել այն աշխարհ, ժողովրդական հեքիաթներում այն երբեմն անդրաշխարհայինն է բերում այսրաշխարհ: Այս մոտիվը հեքիաթում կապվում է պառավի կերպարին: Թեև մեր ժողովրդական հեքիաթներում ավելը հեքիաթի պառավի թռչելու միջոցը չէ, սակայն, այնուամենայնիվ, մի շարք դիպաշարերում պառավի ձեռքի ավելը գերբնական արդյունքի է հանգեցնում. պառավն ավլում է և գտնում երեք կախարդական ընկույզ, որոնցով լուծում է թագավորի առաջադրած խնդիրները[38]: Պառավի ձեռքին ավելը հրաշագործ միջոց է կամ փորձություն առաջադրելու գործիք: Խորթ մորից հալածվող հուսահատ աղջկան օգնության է հասնում ավելը ձեռքին պառավը, որն ավլում է խառնած աղանձը և կորեկը[39]: Ավլելը հաճախ անտառի պառավի կողմից հերոսին առաջարկվող փորձությունն է, որով գերբնական

35 Մովսիսյան 1972, 108:

36 Նահապետյան 1983, 63:

37 Славянские древности 1995, 308.

38 ՀԺՀ-3, 221:

39 ՀԺՀ-8, 75–77, 390–393:

աշխարհի մուտք գործող հերոսը պետք է շահի նրա վստահությունը[40]: Նշված սյուժեներում, փաստորեն, ավլելը ոչ առօրյա մի գործողություն է, որն իրագործում է պառավը՝ այն աշխարհի մուտքը հսկող, հերոսներին օգնող և փորձության ենթարկող, նրանց՝ դեպի այն աշխարհ մուտքն ապահովող հեքիաթային այս խիստ յուրօրինակ կերպարը:

Այսպիսով, տեսնում ենք, որ ժողովուրդը ավլելն ընկալել է որպես գերբնական գործողություն, իսկ ավելը՝ որպես այս և այն աշխարհների միջև կարգուկանոնի պահապան, որ կարող է պակասեցնել կամ ավելացնել այսրաշխարհայինը: Ուշագրավ է, որ ավել բառի ստուգաբանության մեջ արդեն իսկ արտացոլված են նրա այս հատկանիշները: Հնդեվրոպական ծագմամբ այս բառը երկիմաստ է, որ նշանակում է *ավլել* և *ավելացնել*, *շատացնել* [41]: Հետագայում ավելով բաղադրվում են նաև նոր բառեր՝ *ավելորդ*, *ավելցուկ* [42]: Բնորոշ է, որ Համշենի բարբառում, օրինակ, ավլելու հետևանքով կուտակված աղբը *ավելուսք* է կոչվում, որը նշյալ իմաստից բացի ունի նաև *ավելցուկ* իմաստը[43]:

Հիմնվելով վերջին տրամաբանության վրա, որ ավելով մենք տնից հանում ենք ավելորդը, կարող ենք մեկնաբանել նաև, թե ինչու ժողովուրդը արգելում է ավլել մայրամուտից հետո: Կարգուկանոն մտցնող այդ գործիքով մենք տանը թողնում ենք հիմնականը և հանում ենք ***ավելը***, ***ավելացածը***, ***ավելորդը***: Բարու շրջանում այդ ***ավելը*** չարն է, չարի շրջանում՝ բարին:

Վանքի ավելն ու ավելածուն. ավելը եկեղեցական ծեսում

Ավելի հիշյալ բոլոր դրական գործառույթներն առավել խտացված ի հայտ են գալիս վանքի ավելի հետ կապված հավատալիքներում: Վանքի ավելի առաջին գործառույթը նրա բուժիչ լինելն է: Ժողովուրդը հավատացած է, որ գորտնուկի բուժման լավագույն միջոցը վանքի ավելն է: Մեր բանասացներից մեկը պատմում էր, թե ինչպես իր աղջկա ձեռքի գորտնուկը բուժվել է միայն այն բանից հետո, երբ եկեղեցու հավաքարարն ավելը քսել է գորտնուկին: Ուշագրավ է, որ ըստ բանասացի՝ վանքի հավաքարարը նույնիսկ մի առանձին անկյուն ուներ՝ նման «բուժում» իրականացնելու համար[44]: Մեկ այլ բանասաց նշում էր, որ գորտնուկ ունեցողը պետք է ավլեր եկեղեցու գետինը և անմիջապես ավելը քսեր գորտնուկին[45]: Վանքի ավելը յուրօրինակ մաքրագործում է իրականացնում՝ «սրբելով» ոչ միայն մաշկային, այլև ներքին հիվանդությունները: Այսպես, բանագետ Եվա Զաքարյանի գրառումներում բանասացը, որը քահանա էր, պատմել է, թե ինչպես եկեղեցու ավելը կնոջ մերկ ստինքներին քսելով՝ բուժել են կրծքի ուռուցքը[46]:

---

40 ՀԺՀ-1, 238:

41 Ջահուկյան 2010, 100:

42 Աճառյան 1926, 358:

43 Վարդանյան 2009, 83, 275:

44 Տավուշի մարզ, ք. Դիլիջան, հաղորդեց՝ Դավթյան Լյուդմիլան (ծնվ. 1948 թ.), 2018 թ.:

45 Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, հաղորդեց՝ Մարկոսյան Մարինան (ծնվ. 1967 թ.), 2017 թ.:

46 Զաքարյան 2016, 267:

Վանքի ավելը հայտնի է ոչ միայն որպես բուժող, այլև որպես հաջողություն բերող՝ «մուրազատու»: Այսպես, Գեղարքունիքի Լիճք գյուղում Ս. Աստվածածին մատուռի ավելը մարդիկ ոտքից գլուխ քսում էին իրենց վրա՝ հավատով, թե ավելը երջանկություն և հաջողություն է բերելու իրենց[47]:

Վանքի ավելի հետ կապված սովորույթներում որոշակի դերակատարում ունի նաև եկեղեցու հավաքարարը՝ որպես այդ սրբազան ավելն օգտագործող յուրօրինակ «բուժարար»: Եթե յուրաքանչյուր տան մեջ ավելի գործածությունն արդեն ինչ-որ չափով գերբնական, ծիսական բնույթ ուներ, ապա այս ընկալումը, բնականաբար, շատ ավելի ընդգրկուն մասշտաբների է հասնում եկեղեցու ավելի պարագայում:

Վանքի հավաքարարի կերպարը, պահպանվելով և վերապրելով, մի յուրօրինակ մեկնաբանություն է ստանում քրիստոնեական կրոնում: Վանքի ավելի և վանքն ավլողի մասին հնագույն այս պատկերացումները պարզորոշ պահպանվել են մերօրյա եկեղեցական մի ծիսակատարության մեջ: Մ. Օրմանյանի «Ծիսական բառարանում» կարդում ենք այսպիսի ծիսակատարության մասին. «*Եկեղեցական պաշտոնեության նվիրյալների վրա, յոթ աստիճաններից առաջ, օրհնության կարգ է կատարվում, որը կոչվում է «Սկիզբն աստիճանաց», և օրհնվածները կոչվում են Սաղմոսերգ և ավելածու: Այլ օրհնության մեջ եպիսկոպոսը նվիրյալի ձեռքն է տալիս մի փոքր ավել՝ ասելով՝ «Առ քեզ հրաման լինել ավելածու» և այլն: Այդ նպատակով գլխավոր եկեղեցիների մեջ կոկիկ ու փոքրիկ ավել կա, իբրև ձեռնադրության նյութ*»[48]:

Փաստորեն, քրիստոնեական ընկալմամբ՝ յուրաքանչյուր հոգևորական արդեն ավելածու է, քանի որ նա այն մարդն է, որ կոչված է սրբելու, մաքրելու մարդկության մեղքերը, կյանքի արատներն ու աղտեղությունները: Եկեղեցին այն վայրն է, ուր մարդիկ գալիս են՝ թոթափելու իրենց հոգևոր ախտերը, մաքրվելու իրենց գործած բազմապիսի մեղքերից: Այս առումով, վանքի հավաքարարն ու վանքի ավելը շատ ավելի լայն գործառույթներ են ստանում՝ մարդկության մեղքերը մաքրագործելու, սրբել-տանելու իրենց կարևորագույն դերով:

Եզրակացություն

Այսպիսով, քննությունը ցույց է տալիս, որ ավելը և ցախավելը իմաստային հարուստ և բազմաշերտ խորհրդանիշներ են, որոնց հետ կապված սովորույթներն ու հավատալիքները մինչ օրս դեռ կենդանի են ժողովրդի կենցաղում, ծիսական սովորույթներում և բանահյուսության մեջ: Նյութի քննության այս նախնական արդյունքները ցույց են տալիս, որ հայոց մեջ ավելն ունի հետևյալ իմաստաբանական ընկալումները.

Անձրևաբեր և անձրևախափան ծեսերում ավելի և ցախավելի լայն կիրառությունը հուշում է, որ հնարավոր է՝ այն հնում եղած լինի ջրի և խոնավության աստվածուհիների ատրիբուտը:

---

47 Գեղարքունիքի մարզ, Մարտունու շրջան, գյուղ Լիճք, հաղորդեց՝ Հովհաննիսյան Մերին (ծնվ. 1998 թ.), 2017 թ.:

48 Օրմանյան 1992, 54:

Հարսանեկան ծեսերում և ծիսական բնագրերում ավելն ու ցախավելը խորհրդանշում են հարսնացու աղջկան:

Ավելի՝ որպես կարգուկանոնի պահապանի ընկալումը ակնհայտ է հատկապես ամանորյա ծեսերում, ուր ավելը հիշատակվում է հիմնականում դռան հետ կապված սովորույթներում՝ այդպիսով անցումային այդ իրավիճակում պահպանելով տան շեմը, հանդես գալով որպես քաոսային ուժերին չեզոքացնող:

Ավլելը ժողովուրդն ընկալում է իբրև գերբնական գործողություն, իսկ ավելը՝ իբրև այս և այն աշխարհների միջև կարգուկանոնի պահապան, որից էլ ծագում են ավլելու հետ կապված մի շարք արգելքներ: Ժողովուրդը զգուշանում է ավլելուց որոշակի ժամանակահատվածներում, քանի որ ավելը այսրաշխարհային ինչ-որ բաներ վերացնում կամ ուղարկում է այն աշխարհ:

Ավելը՝ հատկապես վանքի ավելը, բուժական նշանակություն է ունեցել, կիրառվել է մաշկային, այլ հիվանդություններ բուժելու նպատակով, և ընդհանրապես՝ որպես մուրազատու:

Քրիստոնեական կրոնում վանքի բուժարար, մաքրագործող ավելը մուտք է գործել նաև եկեղեցական ծիսակատարություններ, ուր կրոնավորներն ընկալվում են որպես ավելածուներ՝ հոգևոր ախտերը սրբող-մաքրողների իմաստաբանությամբ:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀԺՀ – Հայ ժողովրդական հեքիաթներ
ՀԱԲ – Հայ ազգագրություն և բանահյուսություն

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԱԲԵՂՅԱՆ 1975
Աբեղյան Մ.Խ., Երկեր, հ. Է, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975:

ԱՃԱՌՅԱՆ 1913
Աճառյան Հ.Յ., Հայերէն գաւառական բառարան, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ., Թիֆլիս, Լազարեան Ճեմարան Արևելեան Լեզուաց, 1913:

ԱՃԱՌՅԱՆ
Աճառյան Հ.Յ., Հայերէն արմատական բառարան, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 1926:

ԳՐԻԳՈՐՅԱՆ 1983
Գրիգորյան Ռ.Հ., Գեղարքունիք, ՀԱԲ, հ. 14, Երևան, ՀՍՍ ԳԱ հրատ., 1983:

ՋԱՔԱՐՅԱՆ 2016
Ջաքարյան Ե.Լ., Հիվանդության և բուժման առասպելույթը հայկական հեքիաթներում, Երևան, «Գիտություն», 2016:

ԼԱԼԱՅԱՆ 1988
Լալայան Ե., Երկեր, հ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988:

ԽԱՉԱՏՐՅԱՆ 2017
Խաչատրյան Ժ.Կ., Հայ ժողովրդական տարեկան տոները և դրանց հետ կապված ծիսական տիկին-տիկնիկները ու պարերը, Երևան, «Ասողիկ», 2017:

ԽԱՌԱՏՅԱՆ 2005
Խառատյան Հ.Ս., Տոներ, Երևան, «Զանգակ-97», 2005:

ԿՈՄԻՏԱՍ 2000
Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 10, Երաժշտական-ազգագրական ժառանգություն, գիրք Բ, Երևան, «Գիտություն», 2000:

ԱՎԱԳՅԱՆ 1978
Ավագյան Ս., Արճակ // ՀԱԲ, հ. 8, Երևան, ՀՍՍ ԳԱ հրատ., 1978:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ 2004
Հայրապետյան Թ.Լ., Անձրևաբեր և անձրևախափան ծեսերի երկիակադիր ընկալումների շուրջ // Պատմա-բանասիրական հանդես, Եր., 2004, №3, էջ 217–226:

ՀԺՀ-1
Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 1, կազմ.՝ Ա. Նազինյան, խմբ. Կ. Մելիք– Օհանջանյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959:

ՀԺՀ-3
Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 3, կազմ.՝ Ա. Նազինյան, խմբ. Գ. Հովնան, Էմ. Պիվազյա, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1962:

ՀԺՀ-8
Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 8, խմբ. Նազինյան Ա.Մ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977:

ՂԱՆԱԼԱՆՅԱՆ 1969
Ղանալանյան Ա.Տ., Ավանդապատում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969:

ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ 1963
Մելիք-Փաշայան Կ., Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1963:

ՄՆՁՈՒՐԻ 1986
Մնձուրի Հ., Երկեր, Երևան, «Սովետական գրող», 1986:

ՄՈՎՍԻՍՅԱՆ 1972
Մովսիսյան Ս. (Բենսե), Հարք (Մշո Բուլանըխ) // ՀԱԲ, հ. 3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972:

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ 1983
Նահապետյան Ռ., Ժողովրդական հավատալիքների համակարգը հայոց ընտանեկան ծիսակատարություններում (ըստ աղձնիքահայերի մոտ պահպանված սովորույթների) // Լրաբեր հասարակական գիտությունների, 1983, №4, 54–64:

ՋԱՀՈՒԿՅԱՆ 2010
Ջահուկյան Գ.Բ., Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, «Ասողիկ», 2010:

ՎԱՐԴԱՆՅԱՆ 2009
Վարդանյան Ս.Գ., Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), Երևան, ԵՊՀ հրատ., 2009:
ՍԻՄՈՆՅԱՆ 2017
Սիմոնյան Լ.Դ., Ծառ- ծաղկաքաղիկ, Երևան, «ՎՄՎ-պրինտ», 2017:

ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑ 1978
Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.,1978:

ՐԱՖՖԻ 1962
Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, Պետհրատ, 1962:

ՔԱՋԲԵՐՈՒՆԻ 1901
Քաջբերունի, Ընտանեկան կյանք և սովորույթներ // Ազգագրական հանդես, Տպարան Կ. Մարտիրոսեանցի, 1901, 7–8:

ՕՐՄԱՆՅԱՆ 1992
Օրմանյան Մաղաքիա արք., Ծիսական բառարան, Երևան, «Հայաստան», 1992:

ВАРДАНЯН 2022
Варданян Н. Х., Символическая семантика метлы/веника в армянских народных верованиях (на материале обрядовой и фольклорной традиций) // Этнография, 2022, 4 (18), 175–193. doi 10.31250/2618-8600-2022-4(18)-175-193

КЕНИНГЕМ 1997
Каннингем Скот, Магия в вашем доме, Москва, АСТ Аквариум, 1997.

МОРОЗОВ 2011
Морозов И. А., Феномен куклы в традиционной и современной культуре, Москва, “Индрик”, 2011.

СЛАВЯНСКИЕ ДРЕВНОСТИ
Славянские древности, Этнолингвистический словарь под редакцией Н. И.Толстого, т. 1, Москва, “Международные отношения”, 1995:

ТАРНАПОЛЬСКАЯ 2013
Тарнапольская Г. М. Символ как загадка чужого культурного опыта // Вестник угроведения, 2013, № 4 (15), с. 110–117.

CHAMBERLAIN 2009
Chamberlane J., Chinese Gods: An Introduction to Chinese Folk Religion, Hong Kong. London, Blacksmith Books, 2009.

Համացանցային աղբյուրներ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ 2013
Նահապետյան Ռ., Հարցազրույց Ռաֆիկ Նահապետյանի հետ, 2013, URL: https://yn.am/?p=14994&l=ru, մուտքը՝ 02.01.2022

Nvard Kh. Vardanyan
Institute of Archaeology and Ethnography
Yerevan State University

RITUAL USE OF A BROOM: SURVIVALS OF TRADITIONAL PERFORMANCES TODAY

Keywords: broom, bark, folk beliefs, rituals, folklore, purity, order, healing.

In folk customs and folklore one can often find different beliefs related to a broom. Despite the abundance of such motifs in past and in the current folklore and ethnographic materials, in Armenian folkloristics and ethnography they have not yet been investigated.

The article examines the ritual use of a broom, in particular, in the rites to call and stop the rain, in the wedding ceremony and ritual texts, in the New Year's rite. Some common pan-Armenian prohibitions related to sweeping are considered as well.

It turns out that earlier the broom was a doll of mother goddesses, as well as the embodiment of a bride-girl in the wedding ritual. The perception of the broom as a guardian of order is especially evident in the New Year's rites, where the broom is mentioned mainly in contexts associated with the door. Guarding the house at this transitional point in space and time, the broom acts as a neutralizer of the forces of chaos. In a number of folk beliefs, both recorded long ago and in modern times, the healing power of a church broom is mentioned, and the special place is

given to a person sweeping the floor in the church - he acts as a healer. This idea was also reflected in one Christian ritual.

Нвард Хачатуровна Варданян

Институт археологии и этнографии

Ереванский государственный университет

РИТУАЛЬНОЕ ПРИМЕНЕНИЕ ВЕНИКА (МЕТЛЫ): ПЕРЕЖИТКИ ТРАДИЦИОННЫХ ПРЕДСТАВЛЕНИЙ В НАШИ ДНИ

Ключевые слова: метла, веник, ритуалы, народные верования, фольклор, чистота, порядок, исцеление.

В народных обычаях и фольклоре часто можно встретить разные поверья, связанные с веником. Несмотря на обилие таких мотивов как в прошлых, так и в нынешних фольклорных и этнографических материалах, в армянской фольклористике и этнографии они до сих пор не были исследованы.

В статье исследуется ритуальное применение веника, в частности, в обрядах по вызыванию и прекращению дождя, в свадебном обряде и обрядовых текстах, в новогоднем обряде. Также рассматриваются некоторые распространенные всеармянские запреты, связанные с подметанием.

Оказывается, что ранее веник был куклой богинь-матерей, а также воплощением девицы-невесты в свадебном ритуале. Восприятие метлы как стража порядка особенно очевидно в новогодних обрядах, где метла упоминается в основном в контекстах, связанных с дверью. Охраняя дом в этой переходной пространственно-временной точке, метла действует как нейтрализатор сил хаоса. В ряде народных поверий (и в ранних, и в современных записях) отмечается исцеляющая сила церковного веника, причем особое место здесь отведено человеку, подметающему пол в церкви: он выступает целителем. Такое представление отразилось также в одном христианском ритуале.

Ներկայացվել է՝ 19.08.2022,
գրախոսվել է՝ 20.09.2022,
ընդունվել է տպագրության՝ 01.05.2023:

Նվարդ Վարդանյան

ԱՎԵԼԸ (ՑԱԽԱՎԵԼԸ) ԾԻՍԱՀԱՎԱՏԱԼԻՔԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ. ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ՀԱՐԱՏԵՒՈՒՄԸ ՄԵՐ ՕՐԵՐՈՒՄ

Նկ. 1. Անձրևաբեր տիկնիկ Նորի՝ պատրաստված ցախավելից (նկարը՝ Ն. Վարդանյանի, 2017 թ.)

Նկ. 2. Հուշանվերային տիկնիկ, Երիտասարդ կինը՝ ավելով (նկարը՝ Ն. Վարդանյանի, 2017 թ.)

Նկ. 3. Ամանորյա ավել՝ արվեստաբան Լուսիկ Ագուլեցու դռան վրա (2018 թ.), URL https://blog.168.am/blog/192336.html

Նկ. 4. Ավել-հմայիլ դրան համար (նկարը՝ Ն. Վարդանյանի, 2018 թ.)

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Անանյան Հայարփի Գուրգենի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արխիվի և արխիվի մշակման գ/հ խմբի ավագ լաբորանտ
ananyanhg@gmail.com

Անգելուշ Լուսինե Միքայելի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Էթնոսոցիոլոգիայի բաժնի ավագ լաբորանտ
lusineangelush@gmail.com

Գաբրիելյան Արմինե Արարատի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի գիտաշխատող
arminegabriel.iae@gmail.com

Դանիելյան Հենրիկ Ավագի
«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի գիտաշխատող
henrikh.danielyan@gmail.com

Խաչատուրեան Յարութիւն Բիւզանդի
Ճարտարագետ, անկախ հետազոտող, Փարիզ
ha.khatchadourian@free.fr

Հակոբյան Սմբատ Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի գիտաշխատող
smbat.hakobian@gmail.com

Հարությունյան Արսեն Էդուարդի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վիմագրագիտության բաժնի վարիչ / Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող
ars.vimagraget@gmail.com

Մալոյան Արման Մանուկի
պատմական գիտությունների թեկնածու
«ԿԶՆԱԿ» հիմնադրամի՝ վերապատրաստման ծրագրերի, մշակման և վերապատրաստումների արդյունավետության գնահատման բաժնի պետ
armanmaloyan@mail.ru

Մատիկյան Հասմիկ Համլետի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող / Շիրակի պետական համալսարանի դասախոս
hasvrej@mail.ru

Մարկոսյան Սալվինե Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրությունների բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Միրիջանյան Դիաննա Հրաչյայի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջնադարյան Հայաստանի հնագիտության բաժնի գիտաշխատող
dianamirijanyan@gmail.com

Մկրտչյան Լևոն Ալբերտի
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կրտսեր գիտաշխատող / «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահապանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ
levoncultur@gmail.com

Շամամյան Նարինե Ալբերտի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազագրության ինստիտուտի Ազգագրության բաժնի գիտաշխատող
dancenano@mail.ru

Ռամազյան Սամվել Մարտունի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող
sramaz@mail.com

Սարիբեկյան Մարիամ Գրիգորի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վաղ հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող / Հայաստանի պատմության թանգարանի ֆոնդապահ
mariamgsaribekyan@gmail.com

Վարդանյան Բենիկ Վարդանի
Հայաստանի պատմության թանգարանի գիտաշխատող
vbenik@yahoo.com

Վարդանյան Նվարդ Խաչատուրի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի ավագ գիտաշխատող / Երևանի պետական համալսարանի դոցենտ
nvardv@yahoo.com

Փալանջյան Ռուզան Սուրենի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող
ruzanpal@gmail.com

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
5

Սրբագրիչ՝ Անժելա Ամիրխանյան
Ռուսերենի և անգլերենի սրբագրիչ՝ Դիանա Ջարդարյան
Ձևավորում և էջադրում՝ Արտակ Հարությունյան

Տպագրվել է «Հովսեփյան» ՍՊԸ տպարանում
հեռ. 043 107 090
hovsepyanprint@gmail.com

ՀԱԻԱ 5